Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 11-ի N 1348 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են անհատ ձեռնարկատերերի կողմից ակտիվների և պարտավորությունների հաշվառման հետ կապված հարաբերությունները:

2. Ակտիվների և պարտավորությունների հաշվառումը պարտադիր է հարկման ընդհանուր համակարգում գործող անհատ ձեռնարկատերերի համար:

3. Ակտիվների և պարտավորությունների հաշվառումն անհատ ձեռնարկատերերի կողմից ակտիվների և պարտավորությունների վիճակի (մնացորդի) և շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և փաստաթղթային հաշվառման միջոցով:

4. Ակտիվների և պարտավորությունների հաշվառման գրանցումները կատարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված հաշվարկային փաստաթղթերի և հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործարքների և գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը:

5. Սույն կարգի կիրառության իմաստով ակտիվներ և պարտավորություններ են համարվում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ակտիվները և պարտավորությունները:

6. Ակտիվների և պարտավորությունների հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված դրույթների հիման վրա, իսկ դրանց կիրառության առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում՝ հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա:

7. Ակտիվների և պարտավորությունների հաշվառումը վարվում է անալիտիկ (վերլուծական) և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման միջոցով:

8. Անալիտիկ (վերլուծական) հաշվառում է համարվում առանձին միավոր ակտիվի և առանձին միավոր պարտավորության սկզբնական և հաշվեկշռային արժեքի հաշվարկման միջոցով հաշվառման վարումը՝ արտացոլելով դրա հաշվարկումն ու հետագա փոփոխությունները:

9. Սինթետիկ (ընդհանրացված) հաշվառում է համարվում անալիտիկ (վերլուծական) հաշվառման հիման վրա ակտիվների և պարտավորությունների խմբերի ընդհանրացված հաշվառումը՝ արտացոլելով հետագա փոփոխությունները:

10. Ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են սկզբնական և հաշվեկշռային արժեքով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված վերագնահատման դեպքերի:

11. Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:

12. Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալները հավաքվում և համակարգվում են ժամանակագրական կարգով՝ էլեկտրոնային եղանակով:

13. Ակտիվների և պարտավորությունների հաշվառումը որպես անհատ ձեռնարկատիրոջ ակտիվներ և պարտավորություններ համարելու առումով հիմք է ընդունվում գործարքի կողմ որպես անհատ ձեռնարկատեր հանդես գալու հանգամանքը:

14. Հարկման հատուկ համակարգից հարկման ընդհանուր համակարգ անցած անհատ ձեռնարկատերերն ակտիվների և պարտավորությունների հաշվառումը վարում են հարկման ընդհանուր համակարգ անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ